656
Ա-79

Հ. Ս. Խ. Հ.

„ԱՎՏՈԴՈՐ“
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1929 ՏԻՐԵՎԱՆ

21 FEB 2013

656
Ա-78

4 AUG 2010

Հրատարակված ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից 1928 թ. 5 հոկտեմբերի (Արձանագրություն № 27 § 1

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎՏՈՄՈԲԻԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՃԱՆԴԱԿՈՂ ՅԵՎ Հ. Ս. Խ. Հ.-Ի ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ԿՐՃԱՏԱԾ «ԱՎՏՈԴՈՐ».

1. Ընդհանուր հիմունքներ

§ 1. *Ավտոմոբիլիզմի զարգացման՝ ոժանդակիչ յեվ Հ. Ս. Խ. Հ.-ի ճանապարհների բարելավման համար կազմակերպվող կրճատված «Ավտո-*

15033-87

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ

դոր» ընկերությունը նպատակ է դրել հիմնորեն խորացնելու ավտոմոբիլային Տեղական Տրանսպորտի յեվ այլ տեսակի մեխանիկական միջոցների հաղորդակցության գաղափարը յեվ նույնպես կազմակերպելու յեվ բարելավելու համար։

§ 2. § 1-ում ցույց տված նպատակի իրագործման համար՝ ընկերությանը հետեվյալ իրավունքներն է տրվում.

ա) Հ. Ս. Խ. Հ.-ի սահմաններում կազմակերպել բաժանմունքներ յեվ կոլլեկտիվներ։

բ) Ավտոտրանսպորտի յեվ ճանապարհային գործի գիտելիքները, մասսաների մեջ տարածել, խմբական պարապմունքների, զրույցների, զեկույցների հրապարակային վիճաբանությունների, միտինգների, եկեկուրսիաների միջոցով։

գ) Հրատարակել լրագիր, գրքեր, բրոշյուրներ յեվ այլն։

դ) Ընկերության անդամներին ուսուցանել, թե ինչպես վարվել մեքենայի հետ յեվ նրան կառավարել։

յե) Ավտոմեքենաների, մոտոցիկլետների, մոտորների յեվ նրանց հատուկ զանազան պարագաների պահանջը հայտնաբերել։

զ) Աջակցել խորհրդային ավտոմոբիլային, մոտոցիկլետային յեվ մոտորո կառուցման արդյունաբերության զարգացմանը։

է) Աջակցել ճանապարհների շինարարության յեվ ճանապարհային արդյունաբերության զարգացմանը։

ը) Աջակցել մատակարարման յեվ

արդյունաբերության վաճառման կազմակերպելու գործին։

թ) Աջակցել ավտոտրանսպորտի յեվ ճանապարհի գործին հատուկ զանազան մասնագետների կադրերի ստեղծման գործին։

ժ) Կազմակերպել գիտական հիմնարկներ, աջակցել հետախուզիչ աշխատանքներին յեվ նմանապես խրախուսել գիտական հետազոտությունների յեվ գյուտերի, ավտոմոտորտրանսպորտի յեվ ճանապարհային գործի բնագավառում։

ի) Ավտոտրանսպորտի յեվ ճանապարհային գործի զարգացման համար կազմակերպել, ցուցահանդեսներ, համագումարներ յեվ խորհրդակցություններ։

լ) Ոժանդակել մոտոսպորտին

(ավտոմոբիլային, մոտոցիկլետային յեվ մոտորջրային) կազմակերպելով փորձեր, մրցություն վազքի միջոցով։

խ) Մասնակցել ավտոմեքենայի, մոտորի յեվ նյութերի ներմուծման պլանի մշակման։

ծ) Մասնակցել ավտոմոբիլային ճանապարհների տնտեսության յեվ կոմմունալ ավտոտրանսպորտի (ավտոմոբուսային յեվ տակսոմոտորային յերթեվեկություն) կազմակերպման գործին։

§ 3. Ընկերությունը ոգտվում է իրավաբանական անձին հատուկ իրավունքներով յեվ կարող է յուր դրամական միջոցներն ունենալ՝ սեփականություն ծառք բերել, ամեն տեսակի գույք, որենքով վերցնել

իրեն պատկանյալ գույքը, գրավ դրնել կամ վաճառել, պայմաններ կընքել, համաձայնություն կայացնել, ամեն տեսակի պարտավորություններ ընդունել, վորոնց թվում յեվ մուրհակներ տալ, դատարանում հայց հարուցել յեվ պատասխանել, որենքով նախատեսված կարգի սահմաններում կամավոր կերպով դրամ հավաքել, նվիրատվության մասնակցել յեվ ընդհանրապես կատարել ընկերության գործնեությանը հատուկ իրավաբանական բոլոր գործողություններ։

§ 4. Ընկերությունը ունի հատուկ կնիք յուր անունը վրան խորագրված։

§ 5. Ընկերության գործնեությունը տարածվում է Հ. Ս. Խ. Հ.-ի սահմաններում։

§ 6. Ընկերությանը իրավունք է տրվում բաժանմունքներ բաց անելու Հ. Ս. Խ. Հ.-ի վորոշ շրջանում, ընկերության նպատակներն իրագործելու համար։

2. Ընկերության կազմը յեվ նրա անդամների իրավունքները ու պարտականությունները

§ 7. «Ավտոդոր» ընկերությանը անդամ կարող է լինել 18 տարեկան հասակ ունեցող այն բոլոր քաղաքացիները, վորոնք ոգտվում են ձայնի իրավունքով յեվ յենթարկվում ընկերության կանոնադրությանը յեվ մուծում են անդամավճար՝ յեվ նույնպես պետական հիմնարկներն ու ձեռնարկները, կոոպերատիվ պրոֆեսիո-

նալ յեվ այլ հասարակական կազմակերպությունները։

§ 8. Ընկերության մեջ մտնող անդամները անմիջապես մուծում են մուտքի վճար յեվ բացի այդ յուրաքանչյուր տարի անդամավճար՝ հետեվյալ չափերով.—

ա) Ֆիզիկական անձերը վճարում են 1 ռ.

ԾԱՆՈԹ.—Կարմիր բանակայինները յեվ նույնպես թոշակավոր ուսանողները, վորպես անդամավճար մուծում են 50 կ. իսկ մուտքի վճարից ազատ են։

բ) Նախնական կոլլեկտիվներն ու կոոպերատիվները 25 ռ.

գ) Ձեռնարկները, հիմնարկներն ու կազմակերպությունները 100—500 ռ. ըստ իրենց կարողության չափի։

ԾԱՆՈԹ.—Մուտքի փայի չափը հավասար է անդամավճարին։

§ 9. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է ակտիվ կերպով մասնակցելու նրա աշխատանքներին, աջակցելու նրա գաղափարների ու նախաձեռնությունների տարածմանը, հասարակության լայն խավերի մեջ, միաժամանակ ծգտելով գրավել նոր անդամներ։

ԾԱՆՈԹ.— Պնտական հիմնարկները, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ յեվ այլ հասարակական կազմակերպությունները ընկերության աշխատանքներին մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով։

§ 10. Ընկերության անդամները

ժողովներին յեվ խորհրդակցություններին վճռական ձայն ունին յեվ նույնպես իրավունք, ընկերության վարչության մարմինների մեջ, թե ընտրելու յեվ թե ընտրվելու։

§ 11. Ընկերության անդամներին անդամագրքույկ ե տրվում։

§ 12. Ընկերության կազմից անդամների դուրս գալը, տեղի յե ունենում անձնական դիմումով, կամ ընկերության համագումարի կողմից վորոշված ժամկետին անդամավճարը չմացնելու դեպքում, յերբ յերեվան են հանվում արտաքսվելիք անդամի կողմից ընկերությանը արատավորող վարմունք, կամ քրեական կարգով հետապնդվող վորյեվե գործողություն։

3. Ընկերության միջոցները

§ 13. Դրամարկղի միջոցները կազմում են՝ ա) մուտքի յեվ անդամավճարի վճարներից, բ) գույքի մուտքի յեկամուտից, դասախոսություններից, եկեկուրսիաների, կանոնադրությամբ նախատեսված ընկերության այլ գործողությունից, գ) պետական յեվ հասարակական կազմակերպություններից յեվ նույնպես այլ յեկամուտներից։

§ 14. Ընկերության միջոցների ծախսումը, տեղի յե ունենում ըստ տարեկան նախահաշվի յեվ հրահանգի, հաստատված ընկերության խորհրդի կողմից։

§ 15. Այն գումարները, վորոնք հատուկ կոչում ունեն յեվ առանձ-

նացված են նվիրատուի հայտարարության համաձայն, կամ այլ շարժառիթներով յեվ պատճառաբանությամբ, այլ նպատակների համար ծախսման յենթակա չեն։

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

§ 16. Հ. Ս. Խ. Հ. ի «Ավտոդոր» ընկերության կենտրոնական վարչության մարմինները կազմում են.—

ա) Ընկերության համահայաստանյան համագումարը,

բ) Ընկերության խորհուրդը, որը պիտի Յերեվանում լինի,

գ) Ընկերության խորհրդի նախագահությունը։

§ 17. «Ավտոդոր» ընկերության համահայաստանյան համագումարը

ընկերության վարչության գերագույն մարմինն է հանդիսանում։

Ընկերության համագումարները լինում են ա) հերթական. հրավիրվում է ընկերության խորհրդի կամ նախագահության նախաձեռնությամբ, վոչ ավելի քան տարեկան մեկ անգամ յեվ բ) արտակարգ, վորը հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ, կամ ընկերության տեղական կազմակերպությունների վոչ սակավ քան $^1/_3$ մասի գրավոր հայտարարությամբ։

Հրավիրման ժամանակը, ներկայացուցչության նորման, համագումարի որակարգը, վորոշվում է ընկերության խորհրդի կողմից յեվ այդ մասին հրատարակվում Հ.Ս.Խ.Հ-ի կենտգործկոմի պաշտոնական որգա-

նում վոչ ուշ քան մեկ ամիս մինչև համագումարի գումարվելը։

§ 18. «Ավտոդոր» ընկերության համահայաստանյան համագումարի անելիքների մեջ մտնում են։

ա) Ընկերության խորհրդի, վերաստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների յև զեկուցումների վերաքննությունը յև հաստատումը։

բ) Վերանայում այն խնդիրների, վորոնք վերաբերվում են ընկերության կանոնադրության փոփոխումներին յև լրացումներին։

գ) Ընկերության խորհրդի յև վերաստուգիչ հանձնաժողովի ընտրությունները։

դ) Ընկերության գործերին վերաբերյալ այն բոլոր խնդիրների լուծումը, վորը համահայաստանյան

համագումարի վորոշմամբ, նրա իրավասության կհատկացվեն։

ԾԱՆՈԹ.— Համագումարում բոլոր խնդիրները վճռվում են ձայների հատուկ մեծամասնությամբ։

§ 19. «Ավտոդոր» ընկերության խորհուրդը, ընտրվում է ընկերության համահայաստանյան համագումարում վորոշ թիվ անդամներով, մի ժամանակամիջոցի համար, վորը վորոշում է նույն համագումարը։

ԾԱՆՈԹ. —Մինչև ընկերության 1-ին համահայաստանյան համագումարը, ընկերության կանոնադրության հաստատումից հետո, հրավիրվում է հիմնադիր ժողով, վորը յև ընտրում է ժամանակավոր խորհուրդ։

§ 20. Ընկերության համահայաստանյան համագումարների ընդմիջումների ընթացքում, խորհուրդը հանդիսանում է, վորպես գերագույն ղեկավարող մարմին, «Ավտոդոր» ընկերության։

§ 21. Ընկերության խորհուրդը կյանքի մեջ իրագործվում է համահայաստանյան համագումարի վորոշումները յեվ նրան յենթակա յեն՝

ա) Խորհրդի նախագահության գործնեության ղեկավարությունը,

բ) Խորհրդի նախագահության, հաշվետվությունների վերանայելն ու հաստատելը։

գ) Ընկերության աշխատանքների ֆինանսական ծրագրների հաստատումը, առաջիկա տարվա համար,

15083-57 187

նմանապես յեվ հսկողություն վերոհիշյալ պլանների յեվ ծրագրների իրագործման վերաբերմամբ։

դ) Նրան է պատկանում «Ավտոդոր» ընկերության ներկայացուցչությունը այլ հիմնարկությունների յեվ կազմակերպություններին հետ հարաբերությունների դեպքում։

§ 22. «Ավտոդոր» ընկերության խորհուրդը, հրավիրում է նրա նախագահության նախաձեռնությամբ, կամ թե չէ խորհրդի անդամների վոչ պակաս քան $^1/_2$ մասի գրավոր հայտարարությամբ, կամ թե չէ վերաստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ, վոչ ավելի քան տարեկան 2 անգամ։

§ 23. Խորհրդի անդամները՝ իրա-

ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՈՍՄԱՆԻՑՈՒՆ

վունք ունեն մասնակցելու, վարչության մարմինների բոլոր նիստերին, ինչպես հանրապետության, նույնպես յեվ «Ավտոդոր» ընկերության տեղական կազմակերպությունների վճռողական ձայնի իրավունքով։

§ 24. «Ավտոդոր» ընկերության խորհուրդը յուր միջից նախագահությունն ե ընտրում, նախապես վորոշելով նրա կազմը, այնքան ժամանակամիջոցով, վորքան լիազորված ե խորհուրդը, խորհրդի նախագահությունը, խորհրդի նիստերի ընդհարումների ժամանակ «Ավտոդոր» ընկերության գերագույն ղեկավարող մարմինն ե հանդիսանում։

§ 25. Խորհրդի նախագահությունը, հրավիրվում ե վոչ ավելի քան ամիսը մեկ անգամ։

§ 26. Խորհրդի նախագահությանն յենթակա յեն «Ավտոդոր» ընկերության բոլոր գործերի ստացվածքի, ձեռնարկությունների յեվ միջոցների կառավարությունը յեվ ընկերության բոլոր ֆունկցիաների իրագործումը, ընկերության նպատակների յեվ խնդիրների համաձայն։

§ 27. «Ավտոդոր» ընկերության ընթացիկ գործերի վարման համար խորհուրդը ստեղծում ե բաժանմունքներ, վորոնք գործում են համաձայն խորհրդի կողմից հաստատված առանձին կանոնադրության։

5. Ընկերության բաժանմունքները

§ 28. Կանոնադրության 6-րդ պարագրաֆում նախատեսված «Ավ-

տողոր» ընկերության տեղական բաժանմունքները կազմակերպվում են ընկերության նախագահության նախաձեռնությամբ կամ նրա նվիրածումով пожертвоյները այդ մասին հայտարարություն և արվում տեղական հաստատությունների, կազմակերպությունների կամ տեղական մի խումբ բնակիչների կողմից, վորոնց թիվը պիտի լինի վոչ պակաս քան 10 հոգի։

ԾԱՆՈԹ.—Յերևանում, ընկերության Յերևանյան բաժանմունքի վարչության բոլոր իրավունքները յեվ պարտականությունները, դրվում են ընկերության խորհրդի վրա, մինչև վոր վերջին-ի խորհրդի կողմից առանձին վորոշում չունենա այդ մասին։

§ 29. Ընկերության գերագույն պարտականությունն և կոլլեկտիվների կազմակերպումը, թե տերիտորիայի յեվ թե ձեռնարկությունների ու հաստատությունների մեջ։

ԾԱՆՈԹ.— Կոլլեկտիվների կազմակերպությունները կատարվում է միմիայն ընկերության բաժանմունքի թույլտվությամբ։

§ 30. Ընկերության խորհրդի կողմից լիազորված անձնավորությունը բաժան·մունքի անդամների ընդհանուր ժողով և հրավիրում, վորը վարչություն և ընտրում մի տարի ժամանակով։

§ 31. Բաժանմունքները գործում

են ընկերության խորհրդի ղեկավարությամբ։

§ 32. Ընկերության բաժանմունքի գերագույն որգանն և հանդիսանում, ընկերության տվյալ բաժանմունքի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջանցքում՝ վարչությունը։

§ 33. Ընկերության բաժանմունքի վարչությունը, իրագործում և ընկերության հահահայաստանյան համագումարների վորոշումները յեվ բաժանմունքի ընդհանուր ժողովի վորոշումները միաժամանակ ի կատար ածելով ընկերության խորհրդի դիրեկտիվի բնույթ կրող վորոշումները։

§ 34. Ընկերության բաժանմունքները պարտավոր են խորհրդին ներկայացնել, ընդհանուր ժողովների յեվ վարչության նիստերի արձանագրությունները յեվ տարեկան հաշիվները ի թիվս դոցա դրամական հաշվետվությունը, վերստուգիչ հանձնաժողովի արձանագրության յեվ գրավոր բացատրության հետ։

§ 35. Անդամավճարներից յեվ այլ աղբյուրներից ստացված յեկամուտը բաժանմունքները գործադրում են իրենց կարիքների վրա, ի բացառյալ այն մասի, վորը պիտի ուղարկվի ընկերության խորհրդին։

§ 36. Բաժանմունքները ընկերության խորհրդի թույլտվությամբ ընկերության կնիքի նման—իրենց կնիք ունեն, բաժանմունքի անվան փորագրությամբ։

§ 37. Բաժանմունքները գործում են սույն կանոնադրության յեվ այն հրահանգների հիման, վորը ընկերությունն ե հաստատում։

6. Վերստուգիչ հանձնաժողով

§ 38. «Ավտոդոր» ընկերության վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում ե ընկերության համահայաստանյան համագումարի կողմից յեվ այն պատգամավորներից, վորոնք չեն մտնում խորհրդի կազմի մեջ յեվ ըստ համագումարի վորոշման թվով վոչ պակաս քան 3 հոգի յեվ 2 թեկնածու։

§ 39. Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգման ե յենթարկում ընկերության բոլոր մարմինները, հաստատությունները, ձեռնարկությունները յեվ կազմակերպությունները յեվ նոցա գործնեությունը, թե ֆինանսական ու տնտեսական կողմից թե առհասարակ ինչպես են դրված աշխատանքները ու ինչպես են կիրառված բարձրագույն մարմինների վարչությունների վորոշումները։

ԾԱՆՈԹ.—Վերստուգման կարգը մշակում ե ընկերության խորհրդի կողմից։

§ 40. Վերստուգիչ հանձնաժողովը յուր գործնեության մասին հաշվետվություն ե ներկայացնում ընկերության համահայաստանյան համագումարին։ Իսկ համագումարների ընդմիջումներին վերստուգիչ հանձնաժողովը ընկերության ապարատի աշխատանքում յուր նկատած թերությունների յեվ չարանպատակ գոր-

ծերի մասին տեղեկացնում է ընկերության խորհրդին կամ նրա նախագահության, յուր նկատառումներով հանդերձ։

§ 41. Վերատուգիչ հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ներկա գտնվելու խորհրդի նախագահության բոլոր նիստերին, նույնպես յեվ ընկերության տեղական կազմակերպություններին խորհրդատու ձայնով։

§ 42. ՀՍԽՀ-ի «Ավտոդոր» ընկերության լիկվիդացիան կարող է տեղի ունենալ ՀՍԽՀ-ի կառավարության կարգադրությամբ կամ ընկերության համահայաստանյան համագումարների վորոշմամբ, վորը պիտի բաղկացած լինի ընկերության անդամների $^2/_3$ մասից։

ԾԱՆՈԹ.—Ընկերության տեղական կազմակերպությունները կարող են լիկվիդացիայի յենթարկվել կառավարական որգանների կարգադրությամբ, ընկերության խորհրդի յեվ ընկերության ընդհանուր ժողովների վորոշմամբ, համաձայնված ընկերության խորհրդի հետ։

§ 43. Ընկերության գույքի լիկվիդացիան կատարվում է կառավարական մարմինների կամ ընկերության համագումարի կողմից նշանակված լիկվիդացիոն հանձնաժողովի միջոցով։

§ 44. «Ավտոդոր» ընկերության լիկվիդացիայի դեպքում նրա բոլոր պարտքերը վճարելուց մնացած ստաց-

վածքը, անցնում է ՀՍԽՀ-ի կառավարության։ Ընկերության տեղական կազմակերպությունների լիկվիդացիայի դեպքում, նրանց ստացվածքը անցնում է ի տնօրինություն ընկերության բարձրագույն կազմակերպություններին։

Իսկականի հետ ճիշտ է՝

Ընկերության Խորհրդի Նախագահի
տեղակալ՝ **Ն. Բերբերյան**

Հայաստանի Գրադարան
Ա. Մեսրոպյանի
Անվան
Публичная библиотека

ԳՐԱՌԱՊ. № 1729 (Բ) ՏԻՐԱԺ 1000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊ. ՊԱՏ. № 1973

ՀՀ Ազգային գրադարան
NL0276864

24.070